

Հաստատված է՝ _____

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Սուշել Ասատրազյան

(ստորագրություն)



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ

(վերահաստատված)

Հաստատված է՝ _____

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Սուշեղ Աստարացյան

(ստորագրություն)



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐՍԻ

1. ՀԲԻ-ի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որի նիստերը հրավիրվում են ռեկտորի կողմից սահմանված պարբերականությամբ և օրակարգով:
2. Ռեկտորատի կազմի մեջ մտնում են՝ ռեկտորը, պրոռեկտորը, ռեկտորի օգնականը, ֆակուլտետների ղեկանները, գլխավոր հաշվապահը նաև ռեկտորի հայեցողությամբ ինստիտուտի հեղինակավոր ամբիոնի վարիչներ, պրոֆեսորները կրթության որակի ապահովման բաժնի ղեկավարը:
3. Ռեկտորի հրավերով ռեկտորատի նիստերին կարող են ժամանակավորապես մասնակցել համապատասխան մասնագետներ:
4. Ռեկտորատի նիստերի գումարումը, օրակարգը և նախագահումը ՀԲԻ-ի ռեկտորի բացառիկ լիազորությունն է:
5. ՀԲԻ-ի ռեկտորը բացելով ռեկտորոսի նիստը հայտարարում է օրակարգը, սահմանում հարցերի քննարկման ընթացակարգը:
6. Քննարկվող հարցերի վերաբերյալ ռեկտորատն ընդունում է որոշումներ, որոնք ունեն խորհրդատվական բնույթ
7. Ռեկտորատի նիստերը արձանագրվում են ռեկտորի օգնականի կողմից:
8. Ռեկտորատի նիստերի արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, ներկա անձինք, օրակարգը, օրակարգի հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները:
9. Ռեկտորատի արձանագրությունները ստորագրում են ռեկտորը և ռեկտորի օգնականը /նիստի քարտուղարը/:
10. Ռեկտորի օգնականը վերահսկում է ռեկտորատի որոշումների կատարումը, որոնք ռեկտորի կողմից հաստատվել են հրամաններով: